

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻ ԱՍԱՑՎԱԾՔԻ ԴԻՍԵՎՈՐՈՒՄԸ «ԱՎԵՍՏԱՅՈՒՄ»

Առածներն ու ասացվածքները վաղնջական ծագում ունեն, դրանք, հիրավի, մարդկության բազմադարյան կենսափորձի կրողներն են և զարմանալի չէ, որ աշխարհի ամենատարբեր ժողովուրդներ՝ անկախ կրոնական, ցեղային, լեզվական, մշակութային, քաղաքական, դիտական զարգացածության աստիճանից, իրենց բանահյուսական նյութերում, կրոնական ուսմունքներում հաճախ կրկնում են նույն ասացվածքը:

Կա հայկական մի հին ասացվածք «Շունը ականջը կտրողից է վախենում»: Այս ասացվածքի և՛ ուղիղ, և՛ վերացարկված ու ընդգրկուն իմաստը մեզանում լիովին հասկանալի է, սակայն իրական ծագումնաբանական հիմքը, առավել տեսանելի ձևով, գտնում ենք «Ավեստայի» «Վենդիդատ» գրքի XIII գլխում¹, որի բովանդակությունն ամբողջությամբ նվիրված է շանը:

«Վենդիդատի» XIII գլուխը «Ավեստայի» ամենաարտառոց, ոչ սովորական հատվածն է, այն շատ դժվար է մեկնաբանել նոր ժամանակների մոտեցմամբ, որովհետև նրանում եղած հասկանալի բացատրությունների, ցուցումների հետ կան բազում խրթին տեղեր, որոնք ավեստագետները դժվարանում են մեկնել: Սակայն ամբողջության մեջ այն այնուամենայնիվ հոգեհարազատ է «Ավեստայի» «Վենդիդատ» գրքի ոգուն և վերջինիս իրավական պատկերացումների, օրենսդրական հիմնավորումների ոլորտի մեջ է գտնվում: Միաժամանակ այն հրաշալի պատկերացում է տալիս նախնական ժամանակների մարդու ապրելակերպի, կյանքի նկատմամբ ունեցած պատկերացումների, մարդու և շան փոխհարաբերությունների մասին:

«Ավեստայի» այս հատվածում շունը դիտվում է որպես մարդու անբաժան ընկեր. դատան, ունեցվածքի, հոտի պահպանն է, որի դոյությունը կենսականորեն անհրաժեշտ է եղել հին ժամանակների մարդուն: Շունը զրադաշտական կրոնի գերագույն աստու՝ Ահուրա Մազդայի ստեղծած բարի էակներից է, հետևաբար պաշտամունքի արժանի: Շան շահերը զրադաշտական օրենքը պաշտպանում է նույնքան հետևողականորեն և կանոնակարգված ձևով, ինչպես մագդեգական կրոնը դավանող հավատացյալ մարդու:

«Ավեստայի» ստորև ներկայացվող հատվածում կան շատ բառեր, որոնք գենդերենից ֆրանսերեն թարգմանելիս պըռֆեսոր Բ. զը Հաուլեն թողել է գենդերեն արտասանությունում և չի թարգմանել: Թարգմանչի կարծիքով հատվածի ավարտը՝ 171-174 մասերը, իրենց բովանդակությամբ դուրս են XIII գլխի բնագրից և դրված են՝ որպես ընդհանուր ավեստական վարդապետությունից բխող եզրակացություն²:

Նկատենք. «Ավեստան»՝ որպես կրոնական ուսմունք, աչքի է ընկնում բացառիկ կենսասիրությամբ: Այն իր հավատացյալներին ներարկում է տենչանք դեպի իրական կյանքը, ձգտում դեպի բարեկեցությունը, սեր դեպի երկրագործական ու անասնապահական աշխատանքները: Եռանդուն աշխատանքը համարում է իրական կյանքի միակ հուսալի հենարանը: Յորենի մշակումը ամենատակալի հարվածն է, որ մարդը կարող է հասցնել չար ուժերին՝ դեերին: Երբ ցորենը հաց է դառնում մարդու համար, դեերը մեռնում են: «Ավեստայում» ամենուր փառաբանվում է երկար ու բարեկեցիկ ապրելը, եռանդուն ու աշխույժ երեխաներ ունենալը, հողը մեծ ջանասիրությամբ մշակելը: Նա, ով

1 «Ավեստայի» «Վենդիդատ» գրքից երկու գլուխ թարգմանել և հրատարակել ենք ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1991 թ. N 1-ում, համառոտ նախաբանով և ծանոթագրություններով:

2 Sbe Avesta. Livre sacre du zoroastrisme. Paris, 1881, p. 136.

չի աշխատի. կղանա մուրացիկ և կսպասի ուրիշների փշրանքներին³: Ըստ «Ավետայի» մուրացկանությունը մեծագույն չարիք է: «Ավետայի» կենսափիլիսոփայության այս պատգամները հավերժական ճշմարտություններ են՝ ուղղված ընդամենը մարդկանց. նրանք չեն հնացել նաև այսօր:

Վերոհիշյալ XIII հատվածում շան դերը ներկայացված է և՛ իրական աշխարհում, և՛ անգրաշխարհում: Շուն սպանելը համարվում է մեծագույն ոճիր, երբեմն հավասարեցվում մարդասպանությանը, որովհետև նա, ով սպանել է շանը, չի կարող անցնել Ձինվաթ կամուրջը. «Ձինվաթ կամուրջը նրա համար կունենա մի դժվարին մոտեցում»: Ըստ զրադաշտական կրոնի Ձինվաթ կամուրջի վրա են հավաքվում մեռած մարդկանց հոգիները, և այդ կամուրջի վրա է որոշվում ով պիտի գնա դժոխք, ով՝ դրախտ⁴: Արդար մարդկանց հոգիների համար Ձինվաթ կամուրջը լայնանում է, և նրանք գնում են դեպի երկինք՝ աստծու մոտ, իսկ մեղավորների համար կամուրջն այնքան է նեղանում, որ նրանք ընկնում են դժոխք: «Վենդիգատի» XIII գլխում ասվում է, որ շանը սպանող մարդիկ, ինչպես ասվեց, չեն անցնի Ձինվաթ կամուրջով և կընկնեն դժոխք. «Եվ շները, որոնք պահպանում են անցումը, բոլորովին չեն ազատի նրան այս ցավագին և սոսկալի էությունից»:

Շունը սուրբ կենդանի է մազդեզական կրոնում, սակայն շունը անվերապահորեն սրբացված չէ, նա էլ մարդու նման ունի իր պարտականությունները, որոնք չկատարելիս կամ թերանալիս ենթարկվում է որոշակի կանոնակարգված պատիժների: Այդ պատիժներից առաջինը շան աջ ականջը կտրելն է, եթե նա իր վարքագծում թերանում է առաջին անգամ: Եթե թերանում է երկրորդ անգամ, ապա կտրում են ձախ ականջը: Ուրեմն նման պատճառներով շան ականջը կտրելը վաղնջական ժամանակներում եղել է նաև Հայ իրականություն մեջ, որից և ժամանակի ընթացքում ձևավորվել ու հարատևել է Հայկական Հայտնի ասացվածքը՝ «Շունը ականջը կտրողից է վախենում»:

«Ավետայի» այս գրքում թվարկվում են մարդու պարտավորությունները շան առաջ: Այսպես, օրինակ, հիվանդ շան հետ պետք է վարվել այնպես, ինչպես մարդու, այսինքն՝ անպայման բուժել: Ահուրա Մազդան հրահանգում է Ջրադաշտին. «Նրանք (այսինքն՝ մարդիկ - Ա. Դ.) պետք է նրա համար որոնեն մի միջոց առողջացման, ինչպես մի արդար մարդու համար»:

Մարդկանց վրա է դրվում նաև շան սննդի Հայթայթումը, նրա կերակրումը: Ահուրա Մազդան հրահանգում է. «Թող նրան մատուցեն որպես սնունդ կաթնեղենը, ճարպը և միսը»:

Այս հատվածում խոսվում է շների վարքագծի, մարդու կյանքում նրանց ունեցած կարևորագույն դերի մասին: Եթե շունն իր դերում է, ապա ոչ զոդերն ու ավագակները և ոչ էլ դայլերը մարդուն ու նրա հոտին վնասներ չեն պատճառի: Խոսվում է նաև դայլից ու էգ շնից ծնված, ինչպես նաև շնից և էգ գայլից ծնված խառնածինների մասին՝ նշելով, որ այդպիսիներից այն, որը ծնվել է էգ գայլից, սովորական գայլից ավելի վտանգավոր է ու կատաղի:

Շանը վերաբերող հատվածի վերջը ներբողական բնույթ է կրում ուղղված մարդու մեծագույն բարեկամին: Շունը համեմատվում է մազդեզական կրոնի քարոզչի, քաջ մարտիկի, ժրջան երկրագործի, հովիվ երկրագործի և հավատարիմ ծառայի հետ:

«Վենդիգատի» 171-174 մասերն ընդհանուր եզրակացություններ են, խորհրդածություններ, որոնք բխում են մազդեզական ուսմունքի ընդհանուր ոգուց և ոչ այս կոնկրետ հատվածից, դրանք նաև վերժամանակյա բնույթ ունեն: Այդ խորհրդածություններում Ահուրա Մազդան բացատրում է, թե մարդիկ կարող են ապրել խաղաղության, լիութան, բարգավաճման, առողջության, զարգացման, հաջողության, հատիկեղենի և արտավայրերի առատության մեջ, եթե հետևեն կրոնի պատվիրաններին և հեռու լինեն մեղքեր կատա-

3 Այս միտքը կա նաև Աստվածաշնչի Հին Կտակարանում. «Իր երկիրը մշակողը հացով կկշտանա». «Առակաց» - 12, 11:

4 Տե՛ս նաև Արտա վիրապ նամակ, Յուլիոսի Յրիան. Երևան, 1958, էջ 146:

րելուց: Հատվածի վերջում պատկերված է մագդեզական կրոնի հավատացյալը՝ այրվող կրակի մոտ կանգնած, ըստմունքը՝ ճիպոտների խուրճը, ձեռքին և սրբադան հեղուկը՝ հոման, դեպի վեր բարձրացրած:

Տպագրության ներկայացվող հատվածը թարգմանված է 1881 թ. Փարիզում լույս տեսած «Ավեստայի» գիտական ամբողջական բնագրից: Հատվածից հանված են կրկնվող մասերը: Ընդհանրապես «Ավեստայում» կրկնությունները լայն կիրառություն ունեն, որոշ հատվածներում դրանք կազմում են բնագրի գրեթե կեսը:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՎԵՆԴԻԴԱՏ

ԳԼՈՒԽ XIII

- I. 1 - Ո՛րն է էակը պատկանող Սպենթո Մենյուսին, Սպենթո Մենյուսի ստեղծածներից,
2 Ով ամեն արչալույսից մինչև արևի բարձրանալը առաջանում է Անրո Մենյուսի համար, ինչպես մի մարտիկ, որը սպանում է հազար թշնամի:
- II. 3 Ահուրա Մազդան պատասխանում է.
-Սա շունն է՝ խայթող, երկարացված դլխով, որ կոչվում է վանհապարա և որին ամբոխի լեզվով կոչում են դյուժակա:
4 Սա հենց դա է՝ այդ Սպենթո Մենյուսին պատկանող այն էակը, այն ստեղծվածը Սպենթո Մենյուսի կողմից,
5 Որն ամեն արչալույսի՝ մինչև արևածագը, զարհուրելի առաջանում է Անրո Մենյուսի համար, ինչպես մի մարտիկ՝ հազար թշնամիներին հաղթահարող:
- III. 6 Նա, ով այն սպանում է, ո՛ր իմաստուն Ջրադաշտ, այն խայթող շունը՝ սուր դլխով, այս վանհապարան է, որ ամբոխի մարդիկ կոչում են դյուժակա, տալիս է մահը նրա հոգուն:
7 Եվ նրանց մեղքը տարածում է իր ազդեցությունը մինչև հայտնի աստիճանի բարեկամության վրա:
8 Ջինվաթ կամուրջը նրա համար կունենա մի դժվարին մոտեցում,
9 Եթե իր կյանքի ընթացքում նա չի լցրել պատվիրված քավության ապաշխարումը:
- IV. 10 - Արարի՛չ Աշխարհների, եթե մեկը սպանում է այս խայթող շանը՝ երկարդլխանի, այս վանհապարան, որին ամբոխի մարդիկ կոչում են դյուժակա,
11 Ո՛րը կլինի նրա քավության պատիժը:
12 Ահուրա Մազդան պատասխանում է.
- Թող նրան հարվածեն 1000 խարազանի հարվածով, 1000 Սրառչոկորանայի:
- V. 13 - Ո՛րն է այդ էակը Անրո Մենյուսին պատկանող, Անրո Մենյուսի ստեղծածներից,
14 Որը ամեն արչալույսի՝ մինչև արևի հորիզոնի վրա բարձրանալը, առաջանում է՝ սոսկալի հակառակորդ Սպենթո Մենյուսի:
- VI. 15 Ահուրա Մազդան պատասխանում է.
- Սա դեև է, որը կոչվում է Ջաիրի միանուրա, և որին մարդիկ կոչում են Ջաիրիմուլակա:

- 16 Սա Անրո Մենյուսի պատկանող էակն է, Անրո Մենյուսի ստեղծագործությունը,
- 17 Որը ամեն արշալույսի՝ մինչև արևի հորիզոնի վրա բարձրանալը, առաջանում է սոսկալի հակառակորդ Սպենթո Մենյուսի:
- VII. 18 Նա, որին նա սպանում է, օ՝ սուրբ Ջրադաշտ, սա դև Ջաիրիմիանուրան է, որին ամբոխի մարդիկ կոչում են Ջաիրիմուակա:
- 19 Այդ մեկը ջնջեց բոլոր իր մտքերը, իր բոլոր խոսքերը, բոլոր ոճրագործությունները:
- VIII. 21 Եթե որևէ մեկը սպանում է հոտապահ կամ տունը պահող մի շուն, անձնական պահպանության կամ հատորեն վարժեցրած մի շան,
- 22 Նրա հոգին կգնա այս աշխարհից ապագայի աշխարհ՝ արձակելով ճիչեր և գեռ ավելի նեղվելով, քան մի դայլ:
- 23 Սի նեղ հովտում, ուր թագավորում է ձախորդությունը. մի խոր անտառում,
- IX. 24 Նրա մահվան ժամանակ մի ուրիշ հոգի չի կարողանա ազատել նրա հոգին այդ ցավագին և սոսկալի էությունից:
- 25 Եվ շները, որոնք պահպանում են անցումը, բոլորովին չեն ազատի նրան այս ցավագին և սոսկալի էությունից:
- X. 26 Եթե մեկը հարվածելով վիրավորել է մի հոտապահ շան,
- 27 Եթե նա ճեղքել է նրա մի ականջը կամ կոտրել է մի ոտքը,
- 28 Եթե այդ վերքի հետևանքով մի գայլ կամ մի գող հարձակվել է նրա ունեցվածքի վրա և այնտեղից տարել է բարիքներ՝ առանց նկատվելու:
- 29 Թող ոճրագործը քալի իր սխալը ըստ կորստի չափի,
- 30 Թող նա քալի շան վերքի համար բաողհովարսթայի պատժով:
- XI. 31 - 35 (կրկնվում է X - 26 - 30 - ը):
- XII. 36 Արարի՛չ մարմնական էակների, եթե մեկը մի հոտապահ շան տվել է մի մահացու հարված, որը հանում է նրանից կյանքի սկզբունքը,
- 37 Ո՞րը կլինի այս արարքի պատիժը:
- 38 Ահուրա Մազդան պատասխանում է.
- Թող նրան հարվածեն խարազանի 800 հարվածով, 800 Սրաոչոքարանայի:
- XIII. 39 - Արարի՛չ մարմնական էակների, եթե որևէ մեկը հարվածում է տնապահ շանը, որից շունը սատկում է, և կորչում է կյանքի սկզբունքը,
- 40 Ո՞րը պետք է լինի այս արարքի պատիժը:
- 41 Ահուրա Մազդան պատասխանում է.
- Թող նրան հարվածեն խարազանի 700 հարվածով, 700 Արաոչոքարանայի:
- XIV. 42 - Արարի՛չ աշխարհների, եթե որևէ մեկը հարվածում է պահապան շանը մի հարվածով, որը նրան մահ է բերում, և նա կորցնում է կյանքի սկզբունքը,
- 43 Ո՞րը կլինի այս արարքի պատուհասը:
- 44 Ահուրա Մազդան պատասխանում է.
- Թող նրան հարվածեն խարազանի 600 հարվածով, 600 Սրաոչոքարանայի:
- XV. 45 - Ահուրա Մազդան, արարի՛չ աշխարհների, եթե մեկը հարվածում է բոլորովին ջահել շան՝ մի հարվածով, որից նա սատկում է,

- 46 Մ'րն է քավումը այս մեղքի:
 47 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Թող նրան հարվածեն խարագանի 500 հարվածով, 500 Սրառչո-
 քարանայի:
- XVI. 48 Այդպիսին է պատիժը մարգասպանի, ժագհյուսի, վիզյուսի, սու-
 կուրունայի, սուր ատամներով շնագայլի, աղվեսի և Սպենթո Մնն-
 յուսի բոլոր արարածների, որոնք սերում են շների ցեղից, բացառ-
 յայ ջրաղվեսը:
- XVII. 49 - Տեսանելի էակների արարի՛չ, ինչպես մի հոտապահ շուն
 պետք է բնակեցվի:
 50 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Եթե տեղավորվում է մի յուժեսթիսի տարածությամբ՝ կենդանի-
 ներից ու րարիքներից առաջ, որոնց նա պահպանում է, նա հեռաց-
 նում է գողին ու գայլին, որոնք գաղտագողի սողոսկում են:
- XVIII. 51 - Արարի՛չ, ինչպե՞ս գյուղը պահպանող մի շուն հարմար է տե-
 ղավորել:
 52 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Եթե կա դյուղից դուրս մի հաթճրայի տարածություն, նա հեռաց-
 նում է գողին ու գայլին, որոնք սողոսկում են գաղտագողի,
- XIX. 53 - Ինչպե՞ս է պատշաճ տեղավորել մի անձնապաշտպան շան:
 54 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Այնտեղ, ուր հարկավոր է են ընդունվին ճարպիկ շներ, բայց ուր
 կամենում են պահպանություն իր մարմնի համար:
- XX. 55 - Արարի՛չ տեսանելի էակների, եթե մեկը զրկել է հոտապահ շա-
 նը ուտելիքից, քանի ոճրագործ արարքներից է պայմանավորվում
 նրա պղծումը:
 56 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Դա այնպես է, ինչպես նա զրկեր առաջին աստիճանի տան գլխա-
 վորին՝ այս մարմնական աշխարհում, նա աղտոտվում է նույն
 ձևով:
- XXI. 57 - Արարի՛չ տեսանելի աշխարհների, եթե որևէ մեկը զրկել է
 սնունդից գյուղը պահպանող շանը, քանի չարիքներով է պայմա-
 նավորվում նրա պղծումը:
 58 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Սա ինչպես, եթե նա զրկի միջին աստիճանի տանտիրոջ, այս
 մարմնավոր աշխարհում, նա պղծվում է նույն ձևով:
- XXII. 59 - Արարի՛չ մարմնավոր աշխարհների, եթե մեկը զրկում է անձ-
 նապահպան մի շան՝ սնունդից, ի՞նչ չարիքներով է պայմանավոր-
 ված նրա պղծումը:
 60 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Սա այսպես է այս մարմնավոր աշխարհում, ոնց որ թե նա զրկել
 էր մի արդար մարդու, որը ներկայացնում է իր տան մեջ, նա իրեն
 պղծում է նույն ձևով:
- XXIII. 61 - Արարի՛չ, եթե մեկը զրկում է սնունդից մի շատ երիտասարդ
 շան, քանի չարիքով է պայմանավորվում պղծումը:
 62 Ահուրա Մազդան պատասխանում է.
 - Դա հավասար կլինի, եթե նա ոճիր գործի բարեպաշտ ծնողներից
 ծնված մի երիտասարդ մարդու նկատմամբ և նրան զրկի սնունդից:
 Այդպիսին է պայմանավորված նրա պղծումը:

- XXIV. 63 - եթե որևէ մեկը զրկում է հոտապահ շանը սնունդից,
64 Ինչպիսի՞ն պետք է լինի նրա պատիժը:
65 Ահուրա Մազդան պատասխանում է:
- Իր մարմնի այդ հոռացման համար (վատթարացման համար) թող
նա հարվածի խարազանի 200 հարված, 200 Սրառչոքարանայի:
66 - 74 (կրկնվում է նախորդ հատվածը):
- XXVIII. 75 - Որովհետև այս իրական աշխարհում Ահուրա Մազդայի բոլոր
արարածներին՝ նրան, որին ծերությունը հարվածում է առավել
չուտ,
76 Սա շունն է, որ մնում է առանց սնունդի՝ մարդկանց մոտ,
որոնք ուտում են,
77 Եվ որը, փնտրելով այստեղ և այնտեղ, չի գտնում սնունդ:
78 Թող նրան մատուցեն որպես սնունդ կաթնեղենը, ճարպը և
միսը:
79 Սա է շանը պատշաճող ուտելիքը:
- XXIX. 80 - Արարի՛չ, եթե կա մի մաղդեղացու տան մի համր ե մոլեգին
չուն:
81 Ի՞նչ պետք է անեն մաղդեղացիները:
- XXX. 82 Ահուրա Մազդան պատասխանում է:
- Թող նրանք նրան դնեն կլոր կոճղից տաշված փայտե վզնոցի
տակ, խոշոր ինչպես մի աղյուս՝ եթե այն պինդ է, կրկնակի խոշոր՝
եթե այն փափուկ է:
83 Եվ թող նրանք այնտեղ փակեն բերանը,
- XXXI. 84 Թող այնտեղ կապեն երկու կողմերից,
85 Թող շուտ կապեն երկու կողմերից,
86 Եթե նրան այդ չանեն, և եթե այս համր և վատ բնավորությամբ
չունը վերք է հասցնում մի կենդանու՝ պատկանող հոտին կամ մի
մարդու,
87 Մեղապարտը պետք է քավի պատճառած ցավի համար, բաող-
հավարաթայի պատժով:
- XXXII. 88 Եթե նա հարձակվում է առաջին անգամ մի կենդանու վրա՝ հո-
տին պատկանող, եթե նա վիրավորում է առաջին անգամ մի մար-
դու, թող կտրեն նրա աջ ականջը:
89 Եթե նա հարձակվում է երկրորդ անգամ մի կենդանու վրա, եթե
նա վիրավորում է կրկին մի մարդու, թող կտրեն նրա ձախ ական-
ջը:
- XXXIII. 90 - 92 (կրկնվում է նախորդ հատվածը):
- XXXIV. 93 - Թող լավ ամրացնեն փայտը,
94 Թող նրան այնտեղ կապեն ամուր:
95 Եթե այդ չանեն, եթե այս շունը առանց ձայնի կամ մոլի բնա-
վորությամբ վիրավորում է մի հոտի կենդանու կամ մարդու,
96 Թող քավեն վիրավորին հասցված վերքը բաողհավարայի պատ-
ժով:
- XXXV. 97 - Արարի՛չ տեսանելի էակների, եթե կա մի մաղդեղացու տան
մեջ մի շուն, որի խելքը առողջ չէ, կամ, որը դարձել է չար,
98 Ի՞նչ պետք է անեն մաղդեղացիները:
99 Ահուրա Մազդան պատասխանում է:
- Նրանք պետք է նրա համար որոնեն մի միջոց առողջացման, ինչ-
պես մի արդար մարդու համար:

- XXXVI. 100 - Արարի՛չ տեսանելի էակների, եթե փնտրելով հանդերձ բոլորովին չգտնեն,
101 Ի՞նչ պետք է անեն մազդեզացիները:
- XXXVII. 102 Ահուրա Մազդան պատասխանում է.
- Թող կապեն փայտի մի կտոր վզին, թող հնազանդեցնեն նրա
րերանը այդ խոշոր փայտով, ինչպես մի աղյուս՝ եթե այն պինդ է,
կրկնակի խոշոր եթե այն փափուկ է, թող կապեն փայտը երկու
կողմերից և թող իրեն նույնպես կապեն:
- XXXVIII. 103 Եթե այդ չանեն բոլորովին, եթե այս շունը, որի խելքը պղտորված է,
հանկարծակի ընկնում է մի փոսի մեջ, մի ջրամբարի, մի
անդուևդի, մի դետի կամ ջրանցքի և այնտեղ ստանում է վերք՝
104 Այս վերքի պատճառով և այդ մեղքի հետևանքով,
105 Այս մազդեզացիները գառնում են ոճրագործ և պեշոթանյուս:
- XXXIX. 106 Այդ ես՝ Ահուրա Մազդան եմ, որ ստեղծեցի շանը՝ ապահովելով
նրան մի հագուստով և մի ոտնամանով,
107 Ժրաջան պահապան և սուր ատամներով,
108 Մարդուց իր հացը ստացող՝ հոտերը պահպանելու համար,
109 Այդ ես՝ Ահուրա Մազդան եմ, որ ստեղծեցի շանը՝
110 Հզոր մարմնով՝ ընդգեմ ավազակների:
- XL. 111 Երբ մի շուն ազնվացել է, նրան օգտագործում են հոտերի
համար,
112 Երբ նա, օ՛ իմաստուն Ջրագաշտ, փութով լսեցնում է իր
ձայնը,
113 Գողը և դայլը բոլորովին չեն դալիս տանելու այն, ինչ պատկանում է
այս շան դյուղին և այն չեն տանում աննկատ:
114 Նրա միջոցով գայլերը, որոնք գաղտագողի սողոսկում են,
կծեծվեն, կտապալվեն կամ կենթարկվեն փախուստի:
- XLI. 115 - Արարի՛չ, ո՞րն է ամենավնասակար գայլը, մի՞թե սա այն
շունն է, որ ծնվել է մի գայլից կամ մի գայլ՝ մի շնից:
116 Ահուրա Մազդան պատասխանում է.
- Նա, եթե մի շուն ծնվել է մի էգ գայլից, օ՛ իմաստուն Ջրագաշտ,
ավելի մահացու է, քան նա, որը ծնվել է մի շնից և մի գայլից:
- XLII. 117 Այդտեղից առաջանում են շներ, որոնք հարձակվում են հոտապահ,
տնպահ, հարձակվող և վարժեցրած շների վրա,
118 Եվ, որոնք հոտեր ոչնչացնող են (ավերող),
119 Եվ, որոնք ավելի ոչնչացնող և ավելի չարագործ են,
120 Ավելի սպանող՝ հոտերի համար, քան ուրիշ շներ,
- XLIII. 121 Դոանցից ծնվում են դայլեր, որոնք հոտերի ոչնչացնող են,
122 Գայլեր առավել ոչնչացնող, ավելի չարագործ,
123 Ավելի սպանող՝ անասունների համար, քան մյուս գայլերը:
- XLIV. 124 Կա շների համար ութ տեսակ՝ տարբեր բնավորության կարգի՝
125 Նրանցից մեկը նման է կրակի քարոզչի, նրանցից մեկը նման է
մի մարտիկի կամ ինչպես մի հողագործի, կամ ինչպես մի ստրուկի,
կամ ինչպես մի գողի, կամ ինչպես մի որսի շան, կամ ինչպես մի
անառակի, կամ ինչպես երեխայի:
- XLV. 126 Նա ստանում է սնունդ՝ ճաշի մի մասը, ինչպես կրակի մի քարոզիչ,
127 Նա փնտրում է գոհացում, ինչպես կրակի մի քարոզիչ,
128 Նա կարեկիր է, ինչպես մի կրակի քարոզիչ,

- 129 Նա սակավապետ է, ինչպես կրակի մի քարոզիչ,
 130 Այդպիսին է բնավորությունը, որ նրան պատկանում է, ինչպես մի կրակի քարոզիչ՝ նմանվի կրակի քարոզչի:
- 131 Նա նկատում է այն, ինչ իր առջ կա՝ ինչպես մի մարտիկ.
 132 Նա հետևում է արտակարգ պարգևներով կովին՝ ինչպես մի մարտիկ,
 133 Նա քայլում է բնակավայրի առջևով և հետևով՝ որպես մի մարտիկ, այն պաշտպանելու համար:
 134 Այդպիսին է բնավորությունը, որը նրան ներկայացնում է որպես մի մարտիկ:
- XLVI. 135 Իբ հսկողություն ժամանակ նա լրիվ չի քնում, ինչպես մի երկրագործ,
 136 Նա բնակավայրի առջևում է կամ հետևում, ինչպես հովիվ երկրագործ:
 137 Այդպիսին է բնավորությունը, որը նրան տրվում է որպես հովիվ երկրագործ:
 138 Նա անում է այն, ինչ հաճո է ուրիշներին՝ որպես մի ծառայող:
 139 – 170 (կրկնվում է նախորդ հատվածը):
- L III. 171 ~ Արարի՛չ աշխարհների, երբ կվերադառնան այս տեղերը, այս բնակեցված երկրները, առատությունն ու արգավանդությունը, առողջությունն ու դարմանումը, ընդարձակումը, հաջողությունը, զարգացումը, հատիկեղենի ու արոտավայրերի աճումը:
- LIV. 172 Ահուրա Մազդան պատասխանում է.
 ~Այս տեղերը, այս երկրները առատությունն ու արգավանդությունը, առողջությունն ու դարմանումը, փառքը, հաջողությունը, զարգացումը, հատիկեղենի և արոտավայրերի աճումը չեն վերադառնա,
- LV. 173. Մինչև որ ուղբային սպանողը չսպանվի կամ իրենց աստվածապաշտ հոգու համար երեք օր ու գիշեր ընծայում չկատարեն՝
- LVI. 174 Այրվող կրակի մոտ, բարսմունքը խրճի ձևով բռնած, և հոման բարձրացրած դեպի երկինք: Դրանից հետո կվերադառնան առատությունը, արգավանդությունը, առողջությունը, դարմանումը, հաջողությունը, զարգացումը և աճումը՝ հատիկեղենի և արոտավայրերի աճումը: